

Այս գիւղի հովիւն անուանի Տէր-Յովհաննէս, որ առակախօսութեամբ անուանի եղած էր ամբողջ Բագրևանդայ մէջ: Սա իւր սրախօսութեան, երգիծաբանութեան մէջ այնչափ անուն հանած էր՝ որուն շատ անգամ քուրդ բէկերն կը հրաւիրէին և կը պատուէին:

Կատակաբանութեամբ շատ անգամ բէկերու սխալները կը քննադատէր, ուղղութեան կը հրաւիրէր, երբեմն կեղծաւորութեամբ կը շոյէր, երբեմն ինք զինք յանգէտս ձեւացնելով երկգիմի պատասխաններ կտար: Սորա առակներէն քանին Սալուստիանոսի անուն գրուածիս երկրորդ մասին մէջ առնուած է:

Տէր Յովհաննէս Բասկեիչի պատերազմին կը զաղթէ Աբարանի Աթմա գիւղը, եղբօրորդին կը դառնայ Արծափ. ուստի իկղիբի մօտ Հախվերիս գիւղը, ուր կամուսնանայ, կը դառնայ Ալաշկերտի Եօնճալու գիւղն, ուր Տ. Յունան անուամբ քահանայ կը ձեռնադրուի Սահակ եպիսկոպոսէն, որ Բագրևանդայ առաջնորդ էր:

Բագրևանդայ ժողովրդեան մէջ ամէն առակախօսութիւն Զուրահայ Տէր Յովհաննէսի անունով կը յիշուի ¹:

4. 2 1 Կ Ա Ն Ի

Զուրուկ գիւղէն $1/2$ ժամ յարևելս, Ղազի գիւղէն $5/4$ ժամ յարևմուտս Շեռեանայ ձախ ափին վերայ նաև երկու կարաւաններու ճանապարհի վերայ մի հայաբնակ գիւղ է Զիկանի (ըստ քրդաց 40 աղբիւր) որ և թ. Գալէի $2 1/2$ ժամ ուղղակի հարաւ:

1. Սորա առակներն մեծ մասամբ շատ խիստ էին, միայն մասնաւոր ինչ գրի առած եմ: